

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ Է Փ Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը՝ թէ՛ Ռուսաստանում և թէ՛ Արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻ:

Օտարալեզուները պէտք է գիտեն հետևալ հասցեն՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»: Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայկական քննիչ յանձնաժողովը Արաբերէն լրագրի կարծիքը. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. Ռեֆորմներ թիւրքաց Հայաստանում. — ՆԵՐԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Բագրից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ թիւրքալոյս-ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. — ԲՈՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Սասուն.

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

(«Frankfurter Zeitung»)

Քննիչ յանձնաժողովը յունվարի 6-ին հասաւ խնուս և այդպիսով մինչև Սասուն տանող ճանապարհի վրա քննեց չորս գիւղեր և դրանք բոլորքն ընդունեց նրանց թշուառ բնակիչներին: Երեք ուրիշ գիւղեր, որոնք մի փոքր հեռու են գտնվում մեծ ճանապարհից, նոյնպէս բողոքներ մատուցին յանձնաժողովին: Մի գիւղում յանձնաժողովը ընդունեց մի պատգամաւորութիւն Սասունի կանանց և մանուկների կողմից և լսեց նրանց դանդաղները: Քննիչները դժուարանում է նրանով, որ Սասունի կոտորածից ազատված բնակիչները ցրվել են շրջակայքում, որովհետև նրանց գիւղերը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԱՍՈՒՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐԻՔ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒՆԱԿ

ՃԱԿԸ

IV

Հողագործութիւնը. — Հացահատիկներ՝ ցորեն, գլխի, կորեկ և այլն: — Խաղ մատակարարող նիւթեր՝ կառաւատ, պղինձը և մրկիթ: — Բամբակ և առւոյտ. — Մրդեր. — Շերամապահութիւն: — Մեղաւառութիւն: — Նախապահութիւն՝ կով, ոչխար և այլն: — Կաթնատնտեսութիւն:

Գարունը հրաշալի է Սասունում:

Հողը սեւանում է Զատիկի մօտերը: Ձիւղը մնում է աւելի բարձր տեղերում, անտառներում և լեռնային խոռոչներում: Հազարաւոր գետակներ մեծ ու փոքր հոսանքով տանում են ձիւնահալքի և անձրեւների ջրերը դէպի մեծ ձորերը և գետերը: Ամեն մի քայլում դուք հանդիպում եք աղբիւրների, որոնց ջրերի մասին անվերջ դժուարանքներ էք լսում. — «սա պաղ է մնում ինչպէս սառուց ամբողջ ամառուայ ընթացքում, սա կաթնահամ է, սա դարմանալի մարսական է, սա բուժող աղբիւր է»:

Արտաներ, խոտհարքներ և դաշտեր ծածկվում

մօլորի կոյտեր են միայն ներկայացնում: Թիւրքաց կառավարութիւնը իզուր ջանքեր էր գործ դնում՝ ստիպելու բնակիչներին վերանորոգելու այդ գիւղերը. մինչև անգամ դանձարանից խոստացվող նպաստները չօգնեցին: Թէ որքան քիչ երկիւղ ազդեց Հայաստանի թիւրքաց իշխանութիւններին քննիչ յանձնաժողովի գալը, կարելի է դատել նրանով, որ շատ հայ աղջիկներ մինչև այժմ մնում են թիւրքաց զինուորների կամ քիւրդերի ձեռքում:

Հայ քահանայ Սասունից գրում էր թիւրքացին. «Այստեղի իշխանութիւնները քննիչ յանձնաժողովը անուանում են «մեր» և նրա վրա մեծ յոյսեր են դնում, հաւատացած լինելով, որ նրան չի աջողվի մերկացնել թիւրքաց զինուորների դուր ծողութիւնները: Վկաների մի մասը նրստած են բանտերում, ուրիշները դեռ ևս անկողնին են ծառայում իրանց ստացած վէճերի պատճառով: Թիւրքաց իշխանութիւնները ամեն ջանքեր գործ են դնում՝ ծածկելու համար կանոնաւոր, և մանաւանդ լծիկանթ ձիւրքերի մասնակցութիւնը կոտորածին:

Կասկածելի է, որ հայերին աջողվի ապացուցանել այդ մասնակցութիւնը, որովհետև դրա համար յանձնաժողովը ըստիպված կը լինէր փորել տալ ընդհանուր գերեզմանները, որոնց մէջ թաղված են լծիկանթի հարուածներից սպանված հայերը: Այնու ամենայնիւ, հայ ազգաբնակչութիւնը պահպանում է այդ գերեզմանները, յուսալով, որ իրան կաջողվի ցոյց տալ դիակները յանձնաժողովին:

ԱՐԱՐԵՐԵՆ ԼՐԱԳՐԻ ԿԱՐԾԻՔԸ

Մի արաբ չէլի, Սասուն Արու-Նաղդարա ա նունով, ահա 19 տարի է, ինչ հրատարակում է Պարիզում մի թերթ, որ դուրս է գալիս երկու ամիսը մի անգամ, կէսը ֆրանսերէն, կէսը արաբերէն լեզուով:

Այդ թերթը այժմ առանձնապէս դարձել է երկրպագան և հայկական հարցերով: Լրագրի հիմնադիր չէլի Արու-Նաղդարան, բաւական չը համարելով զրոյով գործելու, գործում է նաև ճառերով, որ նա արտասանում է զանազան միտինգներում և ժողովներում:

են հարուստ, բազմազան բուսականութեամբ: Մի տեղ գեղին ծաղիկներից ամբողջ երկիրը գեղնել, միւս տեղ նա կարմրել է, երրորդ տեղում նա ներկայացնում է բազմաբանդ ծաղիկների մի հազարաւոր դուրս: Առատ ցողը հազարաւոր աղամաններ է թափում բոյսերի վրա և զօրաւոր կերպով նպաստում բոյսերի աճման:

Սասունի լեռնային մասերում ցանում են միայն հացահատիկներ և նրանց մէջ առաւելագոյն կորեկ, գլխի, իսկ աւելի տաք տեղերում, այն է ձորամէջերում և տափարակներում, բացի հացահատիկներից, ցանում են բամբակ, պահում են չեւրամի որդ և պարսպում են այգեգործութեամբ՝ խաղող և զանազան տեսակ մրգեր արգիւնաբերելով: Սասունցիները հաց չեն ծախում ուրիշ տեղեր: Այժման ցանում են, որ իրանց համար բաւականութիւն տալ. Հարեան հարեանից՝ գլխի գլխից, ի հարկէ, գնում են հաց, նայած տարվա բերքին և հունձին. իսկ անբերրի տարիները ինչում են Մուշի դաշտ՝ այնտեղից հաց բերելու:

Երկրագործութեան մէջ այստեղ յայտնի են հետևեալ հատիկները, հունդերը և բանջարները. — ցորեն, դարի, կորեկ, գլխի, գլխի, կալար, մուրթիկ, վաղանա, կտաւատ, կանախ, սիսեռ, դեղնախնձոր (կարտո), շաղամ, կաղամբ և այլն:

Ցորեն ցանում են ամիմը, բայց քիչ քիչ, բարձրագիւր տեղերում (Սեմալ, Շենըլ, Գեղիքու-

Մարտի 10-ին դուրս եկած համարի մէջ, չէլի միջից կէս է լինում ապացուցանելու, որ Անգլիան զրգուել և յարուցել է հայոց հարցը միայն նրա համար, որ դրանով իր ուղած ընթացքը տալ եղիպատկան հարցին:

Մի այլ յօդուածով չէլիւր այն միտքն է յայտնում, թէ ամբողջ թիւրքալոյսում միայն 800,000 հայ կայ, դրա միջոցով չէլիւր և Գոր. սուլթան, մինչդեռ միմիայն Բիթլիսի, Վանի, Տրապիզոնի, Էրզրումի, Անգորայի և Տիւարի նահանգներում 3 միլիոն մահմադական կայ: «Հետեւաբար, ասում է նա, ինչ կարելի է անել 600,000 հայերով: Այդ հայերն էլ իրանց վիճակից շատ գոհ են, ամբողջ 6 դար երջանիկ ապրում են օսմանեան գաղտնի ներքոյ և միայն օտար խռովարարներն են նրանց ճանապարհից հանում»:

Այդ անմիտ, երկխայկան մտքերը յայտնելուց յետոյ, երջանիկ Արաբիայի այդ դաւալը ծաղրում է անգլիական արդարադատութիւնը, ասելով թէ, նա արդարացնում է մարդասպաններին և մեղադրում անմեղներին:

Անկասկած, արաբ չէլիւր կը ցանկանար, որ անգլիական արդարադատութեան տեղ, ոչ թէ միայն թիւրքալոյսում, այլ ամբողջ Եւրոպայում թաղաւորէր օսմանեան արդարադատութիւնը, որպէս զի վերանորոգվին ենիւրոպական ժամանակները, և Եւրոպայի ամեն մի գաւառում ստեղծվէր մի-մի դժբաղդ Սասուն, արեան գետերով, և անթիւ գիւղերով...

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՄՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

I

Ֆրանսիական «Journal des Debats» լրագիրը գրում է հետևեալը. «Այս օրակէն անգլիական «Daily Telegraph» լրագիրը մի անախորժ գրութեան մէջ է դրված մի անցքի պատճառով, որ ապացուցանում է, թէ քիչ աստիճան պէտք է կասկածով վերաբերվել այն յօդու լուրերին, որ աշու ձախ տարածում է Լօնդօնի մամուլը:

Հայաստանի յօդուները ստիպել են որոնց վերաբերմամբ մի միջադատյին յանձնաժողով քննութիւն է կատարում հեղ բուն տեղի վրա: Փետրվարի 27-ին, «Daily Telegraph» լրագիրը իր «յատուկ թղթակցից» ստացած մի երկար հեռագիր հրատարակեց, որ տրված էր Մուշում վերաբերելով 23-ին, և որը պարունակում է Սասունի

զան գիւղերում), աւելի սակաւ, քան Գալուրիկի, Ղիւանի, Ղուլիի գիւղերում: Կորեկը պողպաքեր է և շատ է ցանկում: Գարի ամեն տեղ, բայց սահմանափակ քանակութեամբ:

Գլխիւր յատուկ է Սասունին և մասամբ Մուշին: Դա ունի բարձր բուն, որի ծայրին գլխի վայր կարելի է կլոր, սպիտակ հատիկներով լի ողկոյցաձև մի գունդ, որ ունի շամամի մեծութիւն: Նա շատ պտղաւոր է և թէ տալիս է համեղ հաց և թէ գործ է անվում ապուր պատրաստելու համար: Գալուրիկում և Ղիւանում բուսում են նրա ամենալաւ, խոշոր տեսակները: Գիւրջգլխի ամեղ սասունցիները հասկանում են սիլինդր, եղիպատեղները, դա այնքան տարածված չէ:

Կալար, մուրթիկ և վաղանա տարածված են ոչ հաւասարապէս. ամենից շատ տարածված է կալարը, այնուհետև վաղանան (Ղիւանում շատ են ցանում), իսկ ամենից քիչ՝ մուրթիկը: Այդ հատիկներից ամենախոշորն է կալարը, ամենամանրը վաղանան, որ ունի սպիտակ կորեկի նման հատիկներ:

Այն հողը, ուր պէտք է ցորեն ցանվի, հերկում են, կամ, ինչպէս սասունցիները ասում են, փնչում են մի անգամ, իսկ կորեկի տեղը չորս անգամ: Ցորենի արած ցաքում են ցանելուց յետոյ, իսկ կորեկին նախ ցաքով հաւասարեցնում են հողը և ապա ցանում:

նի «կոտորածներ» մանրամասնութիւնները, որ նա լսել է կոտորածից ազատված հայերի բերանից և որոնց հարցաքննել է ինքն անձամբ: Նամակը պէտք է Մուշից ուղարկվէր Կարա, որտեղից էլ նա պէտք է հեռագրված լինէր Լօնդօն:

«Սակայն, ապացուցված է, որ սովորական ժամանակը հարկաւոր է գոնէ տասն օր (?) Մուշից Կարա գնալու համար, և որ այս տարվայ յատկապէս խիստ ձմեռը աւելի էլ երկար պէտք է դարձնէր այդ տարածութիւնը: Սըր Բարթոլեւ, որը անցեալ օրը արդէն ցոյց էր տուել համայնքների ժողովում, թէ անհնարին էր հեռագրի պարունակութիւնը հաղորդել այդպէս շուտ, նամակ գրեց «Daily Telegraph» լրագրին, հրաւիրելով նրան հեռագրի բնագիրը երեք էկսպրեսների քննութեանը ենթարկել, որոնք կընտրվին մէկը իր կողմից, մէկը լրագրի խմբագրի կողմից և մէկն էլ՝ միմիայն հեռագրի կողմից: Նա մի և նոյն ժամանակ բողոքում է այն աղմուկների դէմ, որ շարունակ յարուցանում է անգլիական մամուլը Սիրիայի և Մակեդոնիայի կոտորածների և սպանութիւնների մասին, և որ «Times»-ի նման լուրջ լրագիրներն ևս արձագանք են տալիս այդ աղմուկներին»:

Անկասկած, «Daily Telegraph» լրագրի խմբագրութիւնը սիրով կընդունէ հրաւերը և կը ցոյց տայ, որ ոչ թէ միայն հեռագրին է ճիշդ, այլ և այդ հեռագրից ուղարկող թղթակցից այս րօպէիս էլ, թիւրքաց Հայաստանում նստած, հազար ու մի վտանգների ենթակայ, աշխատում է սոսկալի դէպքերի նկարագրներով աղբիւր այնպիսի հաստկաշի ունեցող մարդկանց վրա, ինչպիսիքներից մէկն է և ինքը Բարթոլեւ, որը չէ կարողանում մինչև այժմ էլ հասկանալ, որ թղթակցիցների հաղորդած, սոսկալի փաստերն եղածների միայն տասներորդ, հարիւրերորդ մասն են կազմում...

II

Պարիզում հրատարակվող «New-York Herald» լրագրի Հոսթի թղթակցիցը մարտի 8-ից և 9-ից գրում է հետևեալը. «Թէև համարեա հաստատ է համարվում, որ առաջիկայ Զատիկն ոչ մի նոր կարգիսալ չը պէտք է նշանակվի, բայցս տեղեկացել եմ, որ պապը վճռել է կարմիր գոտակ դնել Պօլսի հայ-կաթոլիկների պատրիարք Աղաբեանի զվարի, նպատակ ունենալով աշողեցնել քրիստոնէական եկեղեցիների միութեան խնդիրը: «Այստեղ հրատարակել են, որ շուտով Աղա-

Բերրիութեան, հունձի առատութեան աստիճանը մերձաւորապէս այս տեսակ է, ցորենը տալիս է մէկին 10—20, դարին 5—10, գլխիւր 200—400, կորեկը 60—100, կալարը 300—500, մուրթիկը 150—200, վաղանան 70—100, կտաւատը 8—15, կանախը 70—100:

Կտաւատից ձէթ են պատրաստում տան գործածութեան համար: Կանախը քիչ է ցանվում: Կտաւատի թերը գործ չէ անվում. բայց կանախի բունից պատրաստում են չուաններ անային պէտքերի համար: Շատ յարգված է Սասունում և ընկոյզի իւղը, որ արդիւնաբերվում է բաւականաչափ: Ձէթ պատրաստում են և պղինձի ծառի պտուղներից (հատերից), լաւ ձեռնելուց և քամելուց յետոյ Պղինձից պատրաստում են նաև առանձին կերակուր:

Ի դէպ, կարելի է յիշել, որ անտառներում և արտերի մօտ բուսում է մրկիթ (շանգիլ) ծառը, որի սեւ, տափակ պտուղները պարունակում են իրանց մէջ մեծ քանակութեամբ ձէթ: Այդ ձէթը ուտելու համար գործածական չէ, բայց նա պէտք է զալիս տեղական սաւօն շինելու համար:

Բոյսերը ցանելու ժամանակ աշխատում են փոքր ի շատ փոփոխել նրանց տեղը, ցորենից յետոյ ցանում են կորեկ, նրանից յետոյ դարձեալ ցորեն, կամ մի այլ հացաբոյս: Միայն անշրջի,

Թիւրք ընդունեց իմ առաջարկութիւնը: Մամբրէ սրբազանից յետոյ՝ Անանիա վարդապետը՝ նախագահ կոնսիստորիայի, մէջ մտաւ և զօրծի աւարտումը յետաձգեց՝ ինձ անհատական լիազօրութեամբ Անհատական իմ ասում, որովհետեւ իմ գործը պարզ և մաքուր էր, հետևապէս հայր Անանիան նրա մէջ գործի աւարտումը խափանող ոչինչ չէր կարող գտնել, ինչպէս որ երեսայ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գեորգ արքեպիսկոպոս Սուրենեանի կատարած ըննութիւնից, որից յետ իմ գործը իր օրինաւոր ընթացքն ստացաւ: Ենթադրեալ սկսած է 1890 թիւից. ամբողջ ժամանակ լուռ էր հանգուցեալ Մերդայեանի այրին: Սրանից ութ ամիս առաջ միայն նա հանգէս եկաւ, պահանջելով, որ իր ամուսնու յիշատակը պահվի թէև եկեղեցու և Մերդայեանի մէջ ամեն ինչ վերջացած էր, թէև ես իրաւունք ունէի Մերդայեանին չը ձանձախել, բայց և այնպէս յարգելով այրուն՝ վիճակային ատենանում՝ թեմական առաջնորդի ներկայութեամբ յայտնեցի, որ ես յետ կը կանգնեմ և կը ոչնչացնեմ իմ պայմանը, միայն այրին թող չիմուծեան վրա իմ արած ծախքը վճարէ և մնացածը ինքը իր միջոցներով աւարտէ՝ իր ամուսնու յիշատակը պահելու համար: Այրին մերժեց:

Կոնսիստորիային միտում էր ինձ թողնել՝ որ սկսած գործս վերջացնեմ:—Այսօր չիմուծեալ աւարտած է, կանգնած հրապարակում, ներքև նկուղ, խանութներ, և վերև մանկավարժական պահանջներին համապատասխան սենեակներ, որոնք իրանց մէջ կարող են գտնուիլ և Աստուծով կը գետնեցնեն՝ մի երկդասեան դպրոց: Ինչ որ ծախսել եմ, թէև իմ գործն է, եղել է դարձեալ հրապարակով, եկեղեցու երէցփոխանի ձեռքով, և հաշիւները ժամանակին կը տպագրվեն պաշտօնական «Արարատ»-ում: Այս բոլորից յետոյ անհատական լիազօրութեամբ յայտնեցի, որ յոգնեալ լինելով՝ «ճարտարապետ Գրիգորեանի կառուցած դպրոցը Մերդայեան պիտի կոչվի»:

Ի դէպ. յօգուածագիր Ա. իր յօդուածի վերջում յիշում է նաև տիկին Մ. Պողոսեանի արած 10000 ռուբլու դոնացիութեան մասին, որը անշուշտ ունի իր օրոշ նպատակը. բայց այդ նպատակը թողնելով՝ կը նկատենք, որ տիկին Պողոսեանը այդ դոնացիութիւնը անելու քաջախիճակ է, մի կողմից իմ կատարած գործի վերաբերմամբ հոգևոր կառավարութեան ինձ խորախուսելը տեսնելով, և միւս կողմից նուստտիս խորհրդատւութիւնը և յորհրդը յարգելով:

Ճարտարապետ Ն. Գրիգորեան

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՍԻՐ

Կ. Պօլսից մեզ գրում են. «Զորքաբերի օր, մարտի 1-ին, հրէից հասարակութեան բարոնապետ տեղակալ Մօշէն Լէվի Էֆէնտի, ընկերակցութեամբ երկու բարձրաստիճան բարոններու և իրենց Գաբու-Քէհնասիի, այցելութեան եկաւ պատրիարք Հօրն»:

խարհերից կազմուի են մեծ հօտեր, որ յետոյ տանում են Պաճառուր Դիարբեքը, Հալէք և Դամ:

Ոչխար և այծ պահում է ամեն մարդ: Միջին տունը ունի մերձաօրացէս 200 գլուխ, ամենաշքեւորը աշխատում է մի 50 գլուխ ունենալ, իսկ հարուստները կարողանում են պահել ամբողջ հօտեր, բաղկացած 500—700 և մինչև անգամ 1000 գլուխ ոչխարից և այծից:

Սասունի շուրջ գտնվող սարերում քիւրդերը բերում են արածացեալ իրանց հօտերը, իսկ ձմեռը նրանք չուում են և դնում հեռաւոր տափարակները, ներքին դաշտերը, որտեղ ձմեռը խիստ չէ և կարելի է ոչխար պահել առանց հնձած խոտի, կամ քիչ խոտով, բաւականաչափ ձմեռային արօտներով: Հայերը մնում են իրանց գիւղերում և կերակրում են խոտով, բայց զլխաւորապէս ծառերի (հօշի, լօղիի և այլն) տերեւներով, մերձաօրացէս մի մասը խոտ և երկու մասը տերեւ հաշուելով: Հարկւր ոչխարը ստանում են հարկւր բարդ տերեւ, ըստ որում ամեն մի բարդը բաղկացած է լինում երեսուն մեծ խուրձից, որոնց իւրաքանչիւրը հաղիւ կարող է մի մարդու շաւիկ կազմել: Ոչխարին համեմատաբար խոտ չափ են տալիս, իսկ այծին տերեւ:

Հայերը աւելի լաւ են խնամում ոչխարին, քան քիւրդերը: Այդ պատճառով երբ ոչխարը լղար է,

Զօրքաբերի, մարտի 15-ին, տեղի ունեցաւ իշխան Բագրատիոն-Մուխրանկու յուզարկաւորութիւնը հանգուցեալի ընտկարանից, դէպի երկաթուղու կայարանը: Ներկայ էին կովկասեան կառավարապետի ամուսինը՝ Եւքսիկա Բօրիսովնա Երեմեմեմովա, Թիֆլիսի նահանգապետ Երեմեմովա, բաղմաթիւ գնեհալներ և պաշտօնատար անձինք, Թիֆլիսի համբարները իրանց զբոսանքներով, վրաց հասարակութեան և տեղական ազգաբնակչութեան շատ ներկայացուցիչները: Զուգարկաւորութեան ետեւից դնում էին զօրքեր: Ինչպէս յայտնի է, հանգուցեալը պէտք է թաղվի այսօր, մարտի 16-ին, Մցխէթի տաճարում, ուր և տարվում է հանգուցեալի մարմինը:

Կ. Պօլսում մի քանի տարիներից ի վեր հրատարակվող «Մարտի» շաբաթաթիւթը, որ անցեալ տարի դադարած էր, ներկայ մարտ ամսի 1-ից սկսել է նորից լոյս տեսնել նոր խմբագրութեամբ: Խմբագիրն է Արշակ Զօպանեան: «Մարտի» լի-նելու է գրաւ ան հանդէս և պէտք է զբաղվի հայ գրականութեան, լեզուի և բարբերի ուսումնասիրութեամբ, ինչպէս և եւրօպական գեղարուեստական գործածների թարգմանութեամբ: Թէ որքան կաջողվի նոր հանդէսին իրագործել իր ծրագիրը, այդ ցոյց կը տայ ապագան: Առ այժմ այսքանը կասենք, որ առաջին համարի բովանդակութիւնը բաւական թող է և առանձին հետաքրքրութիւն չէ ներկայացնում:

Մարտի 13-ին, երեանի քաղաքացիու Տիգրանեան հետեւալ հետագիրն է ուղարկել քաղաքացիին պաշտօնակատար իւմանէնիօր անունով: «Երեան քաղաքի ազգաբնակչութիւնը, անխոչ և տարաբնուոր հասարակական գործիչ, անխոչ անխոչ լի Պապէ Ալեքսանդրովիչի ծննդավայրը շտապում է միացնել ընդհանուր վշտին իր անհուն վշտի զգացմունքները նրա վաղաժամ մահվան պատճառով, եւտն գործունէութեան միջոցին, պաշտպան հասարակական շահերի, հեռու Թիֆլիս քաղաքից, որին նա լիովին նաւիրեց իր կենսքը մինչև իր մահը»:

Մեր ծերունի հնագէտ Ալեքսանդր Երիցեան շարունակում է տօնուն կերպով աշխատել:—անցեալ տարի նա հրատարակեց իր մի գեղեցիկ աշխատութեան առաջին հատորը, որ կրում է հետեւեալ վերնագիրը. «Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը և կովկասի հայք XIX-րդ դարում», իսկ այս օրերս հրատարակվեց նոյն աշխատութեան երկրորդ հատորը: Այդ երկրորդ հատորը պարունակում է իր մէջ Գովհաննէս Կարբեցու կաթողիկոսութիւնը, աւելի քան տասն տարվայ պատմութիւն, այն է 1831—1842 թիւեր: Գրքին կցած է Գովհաննէս կաթողիկոսի լուսանկար պատկերը: Պ. Երիցեան պատրաստում է այդքն և երկրորդ հատորը, որից յետոյ լոյս պէտք է տեսնեն էլի մի քանի հատորներ: Արիստ օր իր բեղմնավոր գրական աշխատութիւնը պ. Երիցեան

վտիտ, ասում են «կարծես քիւրդի ոչխար է»:

Ոչխարը սպիտակամաղ է, այծը սևամաղ: Ոչխարին խուզում են երկու անգամ, իսկ այծին մի անգամ: Ոչխարի բուրդը կակուղ է, այծի մազը կոշտ: Կակուղ մազ ունեցող այծերը այս տեղերը չը կան և չեն էլ բերում Սելվանից: Մուշի կողմերից, ուր կան տեղ տեղ Սասունցիները գնահատում են ոչխարի բուրդը, իսկ այծի՝ կաթը: Այժը ծախվում է լաւ գնով, ուստի նա սիրելի կենդանի է Սասունում:

Ոչխարը պարունակում է իր մէջ 4, երբեմն մինչև 5 լիտր միւս: Այստեղի ոչխարը ունի երկար դմակ, որ քաշում է մինչև մի լիտր և աւելի, օրինակ, 20 նուկի: Մի լիտրը 12 նուկի է, մօտ 16 գրամնայ (ֆունտ):

Ոչխարը տալիս է 1—2 նուկի բուրդ, 6—10 նուկի իւղ և բաւական քանակութեամբ պանիր: Թէ ոչխար և թէ այծ կթվում են օրեկան երկու անգամ՝ կէսօրին և երեկոյան: Այժը շատ կաթ թափում է, համարեա երկպատիկ աւելի կաթ է տալիս, քան ոչխարը:

Ոչխարի ծինը միաժամանակ չէ կատարվում. սկսվում է բարեկենդանից և մինչև անգամ աւելի վաղ և շարունակվում է մի քանի շաբաթ: Այստեղ սովորութիւն չը կայ աշնանը զօչերին բաժանել ոչխարից և մի յայտնի ժամանակ լուսնին միասին:

չը սկսեց աւելի վաղ, այն ժամանակ մենք մինչև այժմ կունենայինք բաղմաթիւ աղպիսի հետաքրքրական հատորներ մեր պատմական գրականութեան մէջ:

«Մեծապատիւ Մուրացկաններ» վերջին ներկայացումը, որ տեղի ունեցաւ Բանկի թատրոնում մարտի 14-ին, զբաւել էր մեծ բաղմութեամբ, շնորհիւ վարդի, Սարգսեանի, Գարու-թիւնեանի, օր. վարդուհու, որոնք կատարում էին զլխաւոր դերերը, լաւ անցաւ: Բացի դերասաններից, այդ օրը մասնակցում էին և սիրողներ՝ պ.պ. Տիգրանեան, Զօրքաբեան և Ուրէկեան: Մի նկատողութիւն: Պարոնեանի պիէսաները ներկայացնելիս մեր դերասանները շատ են աշխատում հասարակութեանը ծիծաղեցնել, մոռանալով, որ ծիծաղեցնողը պէտք է լինի նոյն իսկ տիպերի կօմիկական վիճակը, հեղինակի իւմօրը, և ոչ թէ այս և այն աւելորդ, կամ չափազանցած շարժումները: Այդ չափազանցութիւնները փչացնում են խաղի տպաւորութիւնը: Տպաւորութիւնը փչացնում էր և այն հանգամանքը, որ խաղացողները իրանք բեմի վրա չէին կարողանում իրանց զսպել և իրանք էլ ծիծաղում էին: Ինչպէս շատ անգամ, այդ օրն էլ թատրոնը վառված չէր, և անտանելի ցուրտը ստիպում էր շատերին վերադառնալ նստել: Երբ պէտք է այդ տեսակ անկարգութիւններից ազատվեն հայոց ներկայացումները:

Այս օրերս վախճանվեց քաղաքային բժիշկ Բուդկովսկի, որը մեր քաղաքի հազուադէպ բժիշկներից մէկն էր և յայտնի էր իր ազնուութեամբ և պարտաճանաչութեամբ: Հանգուցեալի յուզարկաւորութիւնը տեղի ունեցաւ երէկ, մարտի 15-ին, բաղմաթիւ հասարակութեան ներկայութեամբ: Ներկայ էին նոյնպէս Թիֆլիսի բեա-լական դպրոցի ուսուցչական խումբը և աշակերտները: Զուգարկաւորութեանը նուագում էր բեալական դպրոցի աշակերտների երաժշտական խումբը:

Թիֆլիսի նահանգապետը հաստատել է Թիֆլիսի հանգուցեալ քաղաքացիու իւմայեանի յուզարկաւորութեան հետեւալ մարշալուտը: Զուգարկաւորութեան հանդէսը կը սկսվի երկաթուղու կայարանից առաւօտեան 10 ժամին, և անցնելով վօկզանայա, Սաղոմայա, Միխայիլովայա, Կիրօչնայա փողոցներով, վէրայի կամուրջով, և այդտեղից էլ Գօլովիսկի պրօպէկտով ու Գօլօրցօ-վայա փողոցով, կանգ կառնի Երեանեան հրապարակի վրա, քաղաքային տան առաջ, ուր հոգեհանգիստ կը կատարվի, որից յետոյ յուզարկաւորութիւնը անցնելով Պուշկինսկի փողոցը և Սօլդատսկի քաղաքը, կը դիմի վանքի մայրեկեղեցին:

Մարտի 6-ին Պետերբուրգում օտնվեց յայտնի վիրաբոյժ պրօֆէսօր Սկլիֆաուսովսկու գլխակաւ

Քանի դեռ կանաչ խոտը լեռնային արօտներում այնքան չէ զօրացել, որ կարելի լինի հօտեւը այնտեղ ուղարկել կերակրվելու, ոչխարներին չեն կթում, այլ բոլոր կաթը թողնում են դռների համար: Կթելը սկսվում է գօլան (մայիս) ամսից:

Կաթը եփում են և մածուն չիւում: Մածունի երեսը, իւղային մասը, շատ անգամ ժողովում են առանձին, աղում, լցնում կարասները և այդպէս պահում մինչև խոր ձմեռը, երբ նրան ուտում են: Կարասների բերանը փակում են և նրանց զլորելով բերանը վայր՝ պահում չոր տեղ: Թաղած հողի մէջ: Նոյն ձևով պահում են յաճախ և անքաշ մածունը, քամած և աղած: Թանից պատրաստում են կամ ժաժիկ, որ այստեղ անուանվում է թաշն հատ և պահվում է աղած, կամ էփած թան, որ կամ ուտվում է իսկոյն, կամ նոյնպէս աղվում է ու կարասների մէջ պահվում և գործ ամվում ձմեռը ապուր չինելու համար: Այդ եփած թանը թանձր հեղուկ է մաթի նման: Զիլ կամ թեւ պանիր Սասունում չէ պատրաստվում: Քիւրդերի մէջ շատերը կաթի երեսը չեն առնում և պատրաստում են մեծ գլուխ պանիրներ 1—2 լիտր ծանրութեամբ: Երբ լեռներից իջնում են քիւրդերը, կտրտում են այդ պանիրը և կտրտներով պահում աղաջրի մէջ առանձին կարասներում:

Սասունցիները պանիր չեն ծախում երբեք, իսկ

գործունէութեան 25-ամեայ յօրեկանը: Զօրքաբեան, ինչպէս հաղորդում են լրագիրները, հրաժարվեց հրապարակական տօնախմբութիւնից, և այդ պատճառով համեստ հանդէսը կատարվեց յօրեկանի ընտկարանում, իր յարգողների նեղ շրջանում: Զօրքաբեանը բաղմաթիւ շնորհաւորական հեռագիրներ և նամակներ ստացաւ, ի միջի այլոց Մօսկվայի համալսարանից, բժշկական ընկերութիւնից, ժողովրդական լուսաւորութեան միմիստրից և ուրիշներից:

Կ. Պօլսի լրագիրներում կարդում ենք հետեւեալը. «Պատրիարքական փողանորդ հայրը երէկ իտալոյ թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ Պատրիարք Հօր կողմէ շնորհաւորական ապացելութիւն տուաւ դեսպան Պարոն տի Գաթալանի»:

Երեքշաբթի ամսիս 14-ին, կայսերական կօլկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում որոշվեց ընտրել մի յանձնաժողով, որ պէտք է մշակի մի ծրագիր՝ ընկերութեան կից երկրագործական գործիքների մի պահեստ բանաւոր համար: Այդ պահեստի նպատակը պիտի լինի ձեռնառու կերպով գիւղացիներին երկրագործական գործիքներ հայթայթել:

Հաստատված է ժողովրդական լուսաւորութեան միմիստրի առաջարկութիւնը՝ Լադարեան ձեռնարանի մասնագիտական դասարանների պրօֆէսօրների, քոչէրաների և ուսուցիչների թոշակը մեծացնելու մասին:

Յիշեցնել հայոց ուսանողութիւնը խնդրում է մեղ տպագրիկ հետեւեալը. «Հայոց ուսանողութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը Ալեքսանդրեանի այն անձնաւորութիւններին, որոնք դրամական նպաստով օգնել են տիկին Լալայեանին, ուսանողական երեկոյների համար հայկական հազուատներ գնելու»:

Պարսից ընդհանուր հիւպատոս Թիֆլիսում, որպէս հաղորդում են «KABAZ» լրագրին Թաւրիզից, նշանակվում է Մանդեղ-Իրրասի-Լուս Մուսալիս-ու-Իսովէ, որը Թաւրիզի արտաքին գործերի միմիստրի գործակալն է: Նոր հիւպատոսի դաւուստը սպասվում է մի քանի շաբաթից յետոյ:

Կ. Պօլսում հրատարակվող «Le Moniteur Oriental» լրագրի մէջ կարդում ենք, որ «Պակէ» ֆրանսիական շոքեհաւային ընկերութեան «Armenie» շոքեհաւը, Գարգանալով անցնելիս, ալկոհոլական նիթրակից: Ալկոհոլի մի հոսանք ետևի կողմից խփելով նաւին և հեղեղելով տախտակամածը, ջարդում է ծծմբաթթւով լի մօտ հարկու շիշեր: Մի թանձր ծով է բարձրանում ծծմբաթթւով: Երկրորդ կրակի ձանապարհորդներից մէկը, Մ. Աբդուլահեան, որը պառկած էր դահլիճում, օտրսախաւար դուրս է թռչում, դուռը բաց թողնել:

Իւղը կարողանում են արտահանել մի յայտնի քանակութեամբ: Բուրդը մեծ մասամբ գնում է ընտանեկան պիտոյքների համար: Բացի հազուատից, որի վրա գործ են ածում բուրդը, սասունցի կանաչ պատրաստում են կարպետներ, փայտներ, թաղիքներ, չուախներ և երբեմն գորգեր: Այս վերջինները ըստ մեծի մասին տարածված են քիւրդերի մէջ:

Ուրիշ կենդանիներ Սասունում քիչ են գործածվում: Գոմէշ ամենին չը կայ լեռնային գիւղերում: Երբեմն Մուշի կողմերից բերվում են փորձի համար գոմէշներ, և պահվում են հարուստ տներում: Խոզ ամենին չը կայ Սասունում: Թէև նա կարող էր բաւականին յարմարութիւն գտնել իր համար Սասունի անտառներում, ուր կաղին կայ մեծ քանակութեամբ:

Զի և ջրի կան միայն մի քանի հարուստ տներում: Զին աւելի հազուադէպ է քան ջրին, որ աւելի է յարմարվում Սասունի քարոտ տեղերին:

Համարեա իւրաքանչիւր տուն պահում է մի կամ երկու էշ, որ գործ են ածում բոնե կրելու, ջաղացը ցորեն և ուրիշ հացահատիկներ տանելու, ալիւր և աղ բերելու: Հարուստ տներում պատահում են մինչև երեք և աւելի էշ պահողներ:

Ա. Բ.

լով, և կիսաշնչապառ ընկնում է տրիսին յատա-
կի վրա: Այդ սարսափելի հեղուկը թափվելով
անցնում է երկրորդ կլասի աննախնիր և լցնում
է կախանները: Հանապարհորդները յանկարծակի
զարթնելով, շտապով աշխատում էին պալատ-
քան բարձրանալ: Դրանցից երկուսին, չը նայե-
լով մթութեանը, աջողակ ազատվել: Մէկ ուրիշը,
սատիկ կարճատես լինելով, դրան տեղ ընդունեց
պատուհանները, որոնցով նա փորձեց անցնել՝ օգ-
նություն կանչելով: Չը նայելով որ նաև ծառա-
յողները շտապեցին օգնություն հասնել նրան,
սակայն թշուառը, սարսափելի այրված մեռա-
մէկ ժամից յետոյ, Երիտասարդ Արդուլանեան ևս
մեռաւ: մի քանի ժամից յետոյ, Բացի դրանցից
կան և չորս վիրաւորածներ:

Մարտի 14-ին, վաղը մայր եկեղեցում կա-
տարվեց Մօսկվայի համալսարանի հանգուցեալ
պրօֆեսոր Ն. Նիքոլսեանի հոգեհանգիստը, մահ-
կան տարեդարձի առիթով: Հոգեհանգիստին, բացի
հանգուցեալի աղջկաներից, ներկայ էին Մօսկվա-
յի համալսարանի նախկին ուսանողներից շատերը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐՔԻՍՏԻՅՈՅ

Կ. Պօլիս, 6 մարտի
Քոլերայի նմանոց հիւանդութիւնը, որ օրը երկու
երեք դոս կը տանի—կամ գէթ այսպէս կը վնաս-
բաղաւորեալութիւնը, խանգարած է մեր թղթա-
տարական յարաբերութիւնները: այսպէս որ
Պօլիս Բաթում գացող չորհանները կը հարկա-
դուին 5 օր քարանձիւս պահել, ուստի և մենք
ալ անկանոն դրելու հարկին մէջ կը գտնուինք:

Եւ քիչ ալ գրեմք, այս հարցումը թող դա-
մանք չի պատճառէ. մեր հիմալուան կացութեան
մէջ, երբ մտերմիւ լարուած է միակ գործի մը
վրա, կարծեմ թէ բաւական անհամ պիտի ըլլայ
ամէն օր Պօլիս հայերուն օրուան մասնաւոր
խնդիրներուն վրա երկարօրէն ճառել:

Իսկ Հայաստանէն հասած տեղեկութիւնները
առայլով շատ դժուարութեամբ կրնան ստուգուիլ:
ահա մէկ օրուան մէջ լեցնելը թէ Երզրումի,
Շապին-Գարահիւսարի և Երզնկայի մէջ արիւն-
ւից զէպրեք պատահած են. ստոյգ են, սխալ են,
յայտնի չէ. անգլիական դեսպանատունը հեռա-
գիրներու կը սպասէր. ընդունած պատասխան-
ները անհանօթ մնացած են դեռ մեզի: Հանրու-
թեան մէջ շատ կը խօսուի այդ տեղերու մանր
կամ մեծ կոտորածներու մասին, բայց այսքան:

Ու ինչ որ ալ կարեւորութիւն ունեցող տեղե-
կութիւն ըլլայ, հեռագիրը անմիջապէս մանրա-
մասնօրէն կը հաղորդէ անգլիական թերթերուն,
որ հաւանօրէն կը հասնին ձեր ձեռքը: Շատ հե-
ռու են հիմա այն օրերը, ուր անգլիական թեր-
թի մը մէջ հայոց մասին լուր մը հաղորդուի
համար մեծամեծ աշխատութիւններ պէտք էին:

Ինչ որ ալ ըլլան ուրիշ հարցերը, Սասունի
խնդիրը կը մնայ միշտ օրուան կարեւորագոյն
գործը, որուն չօրջը կը դառնայ բարեկարգու-
թեանց կենսական հարցը: Թուրք կառավարու-
թիւնը ինչ որ մարդկօրէն դժուարութիւն կարելի
է յարուցանել, չի խնայիր զանոնք: Քննիչ յանձ-
նաժողովին մօտ գտնուելը թարգմաններու խըն-
դիրը սուր երեւոյթ մը առած է: Յայտնի է
թէ Եւրօպայի ճիւղերը ունենին թոմաս անու-
նով հայ-կաթոլիկ թարգման մը, որ միշտ ի
նպաստ թուրքերուն սխալ թարգմանութիւններ
կընէր. Արգոյ Սիմոն խայտառակեց զայն, նոր
թարգմաններու պէտք կայ և խնդիրը Անգլիոյ Ե-
րեւոյթնական ժողովին ատենը ելաւ: Անգլիոյ
դեսպանատունը պատրաստած է մասնաւոր թարգ-
ման մը զոր պիտի զրկէ. Բ. Գուռը յայտարարեց
թէ թարգմանին ընտրութիւնը ինք պիտի կատա-
րէ: Այս աղեղնային պատասխանը շատ զարմա-
ցուց դեսպանը. բայց Գուռը ոչ անցադիր կուզէ
տալ, ոչ պաշտօնական դիւրութիւններ ընծայել
երթալը թարգմանին. և հաճախ սկսաւ Գրան
և դեսպանատան մէջ: Դեսպանը իր վերջական
պատասխանը տուաւ. եթէ մինչև այսօր (երկուշ, 6
մարտ) կէսօրին Գուռը չընդունի դեսպանին նը-
շանակած թարգմանը, այն ատեն դեսպանատունը
պիտի հեռագրէ Երզրումի անգլիական հիւպատ-

տարանին, որ բոլոր պաշտօնականներով ու իրենց
ընտրած ուրիշ թարգմաններով երթան ընտելութեան
վայրը: Հաւանօրէն այս սպառնալիքը իր ազդե-
ցութիւնը կունենայ. կը սպասենք պատասխանի:
Բայց մինչև օր վերջնան Սասունի ճիւղերու-
ները, Հայաստանի հիմնական բարեկարգութեանց
գործը բաւական յաջող վիճակի մէջ է, գէթ ա-
պահովիչ տեղեկութիւններ ունի պատրիարքը:

Իսկ պատրիարքը ինչ որ կարելի է ընել դիւա-
նագիտական շրջանակի մէջ կընէ, շատ անգամ
կատարեալ լուծութեամբ, երբ հարկը այսպէս պա-
հանջէ, ու երբեմն ալ քիչ շատ աղմկալից կեր-
պով, երբ ազգային շահը այնպէս պահանջէ: Ըն-
դարձակ տեղեկագիրը, որու մասին արդէն խօ-
սած եմ, դեռ մինչև այսօր չէ յանձնուած դես-
պաններուն, թէ և եւրօպական թերթերն ըսին թէ
արդէն տրուած է, քանի մը սրբազորութիւններ կան
որոնք ըլլալու վրա են, ու կը կարծեն թէ այս
շարժումը կը յանձնուի, եւրօպական թերթերու
թղթակիցները բաւական զաջափար մը ստացան
այդ տեղեկագիրն վրա:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 14 մարտի: 1893 թ. համար
ներկայացրած ամենաշատակ հաշի մէջ, Սա-
րատովի նահանգապետը, կանգ առնելով ժողո-
վրդական կրթութեան հարցի վրա, բացատրում
է, որ դպրոցը, անկասկած, նկատելի առաջա-
դիմութիւններ է անում, ուսումնական տեսլականի
նախկինները իւրաքանչիւր տարի անկասկած է,
և յոյս կայ, որ աճող սերունդի մեծ թիւը, աստիճա-
նաբար զարգանալով դպրոցներում, կամաց-կա-
մաց կիրառեն պատշաճաւոր հայեացք գիւղական
կեանքի պայմաններին վրա և ընդունակ կը լինի
հասկանալ այն բոլոր միջոցների օգուտը, որ
ձեռնարկվում են ժողովրդի դրութիւնը և բարո-
ւորութիւնը բարձրելու համար: Այդ բացատրու-
թեան վրա տեղի ունեցաւ Բարձրագոյն նկատ-
րութիւն. «Պէտք է յուսալ: Տուայի նահանգ-
ապետի յայտարարութեան հիման վրա, թէ ներ-
կայումս դպրոցներում ուսում են առնում ա-
ռաւելապէս տղաներ, կազմելով բոլոր սովորող-
ների 1/3 մասը, այն ինչ շատ ցանկալի էր նա-
րատորութեան կաթ շատ աղջկաներ գրաւել դե-
պի կրթութիւնը, որովհետեւ կին-մայրերի դրա-
ւութիւնը է կախված ժողովրդի կրթութիւնը,
տեղի ունեցաւ հետեւեալ Բարձրագոյն նկատոր-
թիւնը՝ «Կատարելապէս համաձայն եմ դրա հետ:
Այդ հարցը շատ մեծ նշանակութիւն ունի»:

Վախճանվեց դեմաւադիւստանտ Բօրիս Գրի-
գորիեւիչ Գլինկա—Մարտի:

Պերկարգորութեան միջնորդութիւնը գիւղերն
ուղարկեց դիւրամաշտիկ խրատներ՝ մարիւթ
շնչելու համար:

ԲԵՐԼԻՆ, 13 մարտի: Իշխան Բիսմարկի ծնն-
դեան 80-ամեակը շնորհաւորելու համար եկան
պրուսական սէյմի 308 անդամներ և բեյլստագի
110 անդամներ, որոնց կայարանում զինուորներ
լինեց անձամբ իշխանը և նրա օրդըրը:
ԼՈՆԴՈՆ, 13 մարտի: Կաթոլիկայից հեռագրում
են, «Լի-Խունգ-Չանգի կեանքի դէմ փորձ անու-
ղի անուան է կոյսմայ Գոլուստուկէ» նա 26
տարեկան, է նա պատկանում է «Լեւի» դասա-
կարգին, որոնք ընդունակ են ամեն տեսակ
բուսականութիւններին: Լի-Խունգ-Չանգը գտնվում էր
պալանկներում, և գտնւում էր հիւրանոցը: Գոլու-
ստուկէ դուրս թուաւ ամբողջ, կանգնեցրեց
պալանկներ, և ասորական դարձանկեց ուղ-
ղակի ծերերին: Գնտալը դիպաւ այսին, բայց վեր-
քը վտանգաւոր չէ համարվում: Կանչված է եա-
պոնական կայսրի պալատական բժիշկը: Կայսերա-
կան զոյգը արտակարգ դիւանդաներ ուղարկեց
Լի-Խունգ-Չանգին յատուկ: անկեղծ համակրու-
թեան և վրդովմունքի զգացմունքները Միլիտար-
ները և բարձր աստիճանաւորները իրանց խորին
ցաւակցութիւնը յայտնեցին նրան: Կաթոնական
պարլամենտին մի վճիռ է առաջադրված՝ ցաւակ-
ցական արտայայտութեամբ: Լուր է պտուում, որ
Լի-Խունգ-Չանգը, յանցաւոր փորձից առաջ, բոլոր
ողովին յոյսը կտրեց խաղաղութեան բանակցու-
թիւնների բարեյայտ վախճանի վրա:

Կալկուտտայից ստացված տեղեկութիւններ
համեմատ, վախճանում են Չիտայի անգլիական
հիւպատոսի կեանքի համար, որի մասին վաղուց
տեղեկութիւններ չեն ստացված:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 14 մարտի: Նոյա Մեծութիւն-
ների պալատներում արժանաշխատակ դարձ-
ելու համար, Սիմֆերոպոլի դուստն որոշեց մի
օրինակելի ժողովրդական դպրոց կառուցանել:
Եւրօպայում 21,000-ից աւելի ուղղափառ
քրիստոնեաներ կան: Եւրօպայի անկախ պատե-
րաղում քրիստոնեաները քաջութեան օրինակներ
են յայտնվում: Եւրօպական առաջին զինուորը, որ
ոտ զինք չինական հողի վրա, ուղղափառ էր:

ՄՈՍԿՎԱ, 14 մարտի: Հաստատված է Պ. Ի.

Գուրոնի կտակը, որը իր կարողութեան երկու
երրորդ մասը—2,300,000 ռ. տալիս է անդամակ
որդուն, մի երրորդ մասը—կրտսերին: Հանգու-
ցեալ Գուրոնի 159 պատկերներից 140 ծախ-
ված է, և ստացված է մօտ 3000 ռ.: Մնացած
19 կը ծախվեն աշխարհ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Մարտի 14-ին	
Լճորդի վրա 10 ֆունտ արծէ . . .	93 ռ. 5 Կ.
Բերլինի վրա 100 մարկ . . .	45 242 1/2
Պարիզի վրա 100 ֆրանկ . . .	36 80
Ոսկի . . . արծէ . . .	7 43
Մաքսային կուպոններ . . .	148 —
Արծաթ . . .	— —
Բորսային դիվիզիոն . . .	5 70/100
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	— —
— — — 2-րդ . . .	— —
— — — 3-րդ . . .	— —
40% պետական րէնտա	99 7/8
50% օսկեայ րէնտա 1894 թ.	164 —
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	— —
— — — 2-րդ . . .	— —
— — — 3-րդ . . .	— —
— — — 4-րդ . . .	— —
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	239 —
— — — երկրորդ . . .	225 50
50% պետական երկաթուղ. րէնտա . . .	101 75
40% ներքին փոխառութեան	99 50
41 1/2% օգրառ. թղթ. ալի. կալ. բանկի 101 3/8 . . .	— —
Ալի. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	— —
Գրառ. թղթ.	214 —
41 3/8% վկայակ. գիւղ. հող. բանկի. 101 3/8 . . .	— —
41 1/2% օգրառական թղթեր կալուած. . .	— —
Փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	149 25
— — — թղթադ.	— —
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.	
ընկերութեան օրինագրաններ. . .	102 —
Մոսկվայի քաղաք. օրինագրաններ. . .	101 50
Օղէկային	100 3/8
Թիֆլիսի	— —
Գրառ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. 101 75 . . .	— —
— — — փոխառ.	101 —

Խմբագիր՝ Ա.Է.ԲԱՍՆԻՐԻ ԲԱՆԱԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԵԼԻԿՈՎՍԿԻ

Լոյս տեսաւ
ԵՐԿՐՈՐԻ ՀԱՏՈՐԸ
Ա.Է.ԲԱՍՆԻՐԻ ԵՐԻՑԵԱՆԻ
«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿՈՎԿԱՍԻ
ՀԱՅԻ XIX ԴԱՐՈՒՄ»
ՄԱՍՆ Բ. (1831—1842 թ.)
Կաթողիկոսութիւն Տ. Յովհաննէս V Սրբաբեկի և «Պօլոթէնի»
Գիւնը 2 Բ. Ճանապարհաճախող 2 Բ. 50 Կ:
Առաջին և երկրորդ հատորները միասին 4 Բ. Ճանապարհաճախող 5 ԲՈՒՐԻ:
(№ 30) 2—5

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ո Ւ
ԹԻՐԻՔԱՅ ՀԱՅԵՐԻ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ
ԳԻՆԸ 20 ԿՈՊԵԿ
Թիֆլիսում վաճառվում է «Մշակ» խմբագրատան, նոյնպէս և Գլխորդայա փո-
ղոցի վրա հետեւեալ խանութներում՝ Եփրեմ Ծատուրեանի լաւագոյնում և
Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում:
(№ 144)

Կ Ա Ր Զ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ո Վ
ՀԱԶՈՒԱԳԻՏ ԲՈՒՍԵՂԵՆԵՐԻ ՅՈՒՑԱՀԱՆԻՍ
ԵՂԲ. ՄԱՐԻԳՈ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԲԵԼԳԻՍԵՏԻՑ
Այգեպահութիւն, պտղապահութիւն և ծաղկապահութիւն, պատիւ.
ունեն ծանուցանել, որ բերել են ահագին քանակութեամբ վաճառելու
համար բուսեղեններ և զանազան տեսակ պտղաբեր ծառեր: Ահագին
քանակութեամբ ծաղկաբույսեր և թուփեր: Գանձն են առնում նմա-
նապէս այգեղենութիւն և ծառերի ու թուփերի անկերը, որոնք կը
գնվեն իրանց մօտ Ստացված են դարձեալ ուրիշ բուսեղեններ:
(№ 24) 2—4

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ
ՍՆԴԴԱՐԱՐ ԽՄԻՉԲ (գլխաւոր պահապան Ռուսաստանի համար
«ՆԱՍԱ» ֆիրմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է կօլոնիալ և զեղային ապրանքների բոլոր լաւ մազաղիններում 1/1,
1/2, 1/3 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ առփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցա-
հանդիսում 1894 թ.ին:
(№ 151) 15—50